ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 26.06.2025թ. հ.151-2025թ. գրության՝ Խուդյակովի փողոցի վրա գտնվող «Հաֆ-Հաֆ» կենդանիների սննդի խանութի դիմացի թափառող շների վերաբերյալ, տեղեկացվում է, որ նշված հասցեում իրականացված աշխատանքների արդյունքում «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի կլինիկա է տեղափոխվել երկու թափառող շուն, որոնցից մեկը, որը նախկինում ստերջացվել է կենտրոնում՝ հետազոտվել, պատվաստվել է կատաղություն հիվանդության դեմ և բաց է թողնվել տարածք: Մյուս թափառող շան մոտ, հետազոտության արդյունքում, հայտնաբերվել է լեշմանիոզ հիվանդություն և կենդանին քնեցվել է:

Միաժամանակ տեղեկացվում է, որ աշխատանքները կշարունակվեն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ